ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Խմբային աշխատանքի առանձնահատկությունները առարկայի ուսուցման գործընթացում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	Հովհաննիսյան Ֆլորա
ՈՒՍՈՒՑԻՉ	Մանուկյան Սվետլանա
ԴՊՐՈՑ	Սիսիանի 1-ին հիմնական դպրոց

Սիսիան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

§ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..4

1.1 Խմբային աշխատանքի դերն ու նշանակությունը ուսումնական գործունեությունում.7

1.2 Խմբային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները.....8

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ.....13

2.1 Փորձարարական մաս.....16

2.1.1 Փորձարարական դաս.....16

2.1.2 Փորձարարական դաս.....17

2.1.3 Փորձարարական դաս.....18

2.1.4 Փորձարարական դաս.....19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Կրթության կազմակերպման խնդիրներից են կրթական համայնքի ստեղծումը, սոցիալապես ակտիվ, ինքնակազմակերպվող խմբի համակեցությունը: Այդ խնդիրների լուծման լավագույն ճանապարհը խմբային աշխատանքն է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելու: Դասավանդողը ինքը պիտի տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը, իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել խմբային աշխատանքի առանձնահատկությունները տարրական դպրոցում:

Խնդիրներ՝

- Պարզել խմբային աշխատանքի էությունը:
- Բացահայտել խմբային աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:
- Պարզել ուսումնական գործընթացի տեսակները:
- Բացահայտել խմբային աշխատանքի ազդեցությունը կրթության որակի բարձրացման վրա:

§ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Խմբային ուսուցման հիմքում ընկած է թիմային աշխատանքը, երբ աշակերտները ռեսուրս են հանդիսանում մեկը մյուսի համար: Ուսուցման այս ձևը ապահովում է համագործակցություն, ինքնուրույնություն և խմբային գործունեություն:

Ես կարող եմ զարգացնել սովորողների միջև համագործակցություն, ստեղծելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ բոլոր աշակերտները կընդունեն խմբի ընդհանուր նպատակը և կգիտակցեն, որ խմբի յուրաքանչյուր անդամի հաջողությունն իրենց առավելությունն է:

Բոլորը պետք է ստանան առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պետք է ունենան իրենց դերը, որն էլ իր հերթին կնպաստի աշխատանքի բաժանմանը՝ օրինակ՝ աշակերտներից մեկը կարող է խմբի առաջնորդ լինել, մյուսը կարող է գրանցել մտքերը, իսկ երրորդն էլ կարող է հանդես գալ որպես խմբի խոսնակ:

Խմբային աշխատանքների ժամանակ երեխաները կարող են միասին գրել, իրար փոխանցել գրավոր աշխատանքները, փոխանակել կարծիքներ:

Խմբային աշխատանքների իրականացումը շատ արդյունավետ է տարրական դասարաններում: Գիտնականները գտնում են, որ սա լավագույն միջոցներից է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար: Նման հնարավորությունը շատ կարևոր է այս երեխաների համար, քանզի նպատակ ունենալով սովորեցնելու նախօրոք պլանավորած ուսումնական նյութը՝ խմբային աշխատանքն օգնում է ձեռք բերելու դրական փորձ՝ համադասարանցիների հետ շփվելու և մյուսներին օգնելու համար:

Երեխաներին խմբավորելիս շատ կարևոր է հստակ բացատրել, թե ինչ է իրենցից պահանջվում, և որոնք են խմբային աշխատանքի հիմնական պահանջները: Ես ևս կարող եմ մասնակցել այս աշխատանքներին և ուղղորդել, որ խմբի անդամներն օգնեն մեկը մյուսին, սա առանցքային միջամտություն է, քանի որ, երբ

աշակերտները սովորում են աշխատել խմբով, նրանք կարող են թիմային առաջընթաց ցուցաբերել՝ նույնիսկ առանց իմ օգնության:

Ուսուցում ընկերոջ հետ տեխնիկան կիրառվում է, երբ աշակերտներից մեկը, ով արդեն սովորել է և տիրապետում է ուսումնական նյութին, սովորեցնում է մեկ այլ աշակերտի: Ուսուցման այս ձևն ուղեկցվում է ուսուցչի վերահսկմամբ, ով նախօրոք պլանավորում է առաջադրանքը և ներկայացնում զույգին: Սովորեցնողի դերում հանդես եկող աշակերտն օգնում է ընկերոջը և հետադարձ կապ ապահովում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար» [1; էջ 18]:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը,
- բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը,
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման տարրերն հիմնականում հինգն են.

I. դրական փոխկախվածություն,
II. դեմ առ դեմ փոխազդեցություն,
III. անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
IV. միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,
V. խմբային գործընթացի մշակում [3; էջ 45-47]:

Խմբային աշխատանքի արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների

ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ» [2; էջ 17-24]:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար:

«Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին» [4, էջ 145]:

Խմբային քննարկումների ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսումնական պրոցեսում, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունը ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ բավականին մեծ է և նշանակալի: «Ուսուցչի գործը հասարակության շրջանում ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև՝

երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում» [5; էջ 48]:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար: Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

1.1 Խմբային աշխատանքի դերն ու նշանակությունը ուսումնական գործունեությունում

Հասարակության կողմից ընդունված է դասի ընթացքում հաշվի առնել ուսանողների ակտիվությունը, ելնելով ձեռքերի դիրքից. ձեռքերը վեր պարզած՝ առանձին սովորողների ելույթները ամբողջ դասարանի առջև: Իսկ եթե երեխան իր հոգեբանական առանձնահատկություններից ելնելով դեռ չի կարողանում հրապարակավ խոսել: Որտե՞ղ է վստահությունը, որ այն երեխաները, ովքեր արտաքուստ ակտիվորեն մասնակցում են դասին, տիրապետում են այս նյութին:

Այսպես, համատեղ գործունեության մեջ, առաջին հերթին դրսևորվում է փոքր խմբերով սովորողների ակտիվությունը՝ այնտեղ նրանք իրենց ավելի հարմարավետ են զգում: Աշակերտը դեռևս չի կարող տարբեր պատճառներով հրապարակավ խոսել և իր մտքերը բարձրաձայն արտահայտել ամբողջ դասարանի և ուսուցչի առջև, բայց խմբում կարող է ակտիվ դիրք գրավել, բոլորի հետ հավասար հիմունքներով քննարկել առաջադրված հարցերն ու առաջադրանքները: Նման իրավիճակում հայտնված աշակերտն իրեն ավելի վստահ է զգում, ինչը բավականին կարևոր է հատկապես վերապատրաստման առաջին փուլում:

Երեխաների համատեղ կրթական աշխատանքի կազմակերպման նպատակները.

- ⌦ յուրաքանչյուր երեխայի տրամադրել էմոցիոնալ և բովանդակալից աջակցություն, առանց որի շատ առաջին դասարանցիներ չեն կարող կամավոր միանալ դասի ընդհանուր աշխատանքին, առանց որի երկչոտ և վատ պատրաստված երեխաների մոտ առաջանում է դպրոցական անհանգստություն, իսկ առաջնորդների մոտ բնավորության ձևավորումը տհաճորեն աղավաղվում է,
- ⌦ յուրաքանչյուր երեխայի ինքնահաստատվելու հնարավորություն տալ, իր ուժերը փորձել միկրո վեճերում, որտեղ չկա ուսուցչի հսկայական հեղինակությունը և ոչ էլ ամբողջ դասարանի ճնշող ուշադրությունը,
- ⌦ յուրաքանչյուր երեխայի տալ այդ ռեֆլեկտիվ ուսուցման գործառույթների կատարման փորձը, որոնք կազմում են սովորելու ունակության հիմքը:

Առաջին դասարանում սա մոնիտորինգի և գնահատման գործառույթ է, հետագայում՝ նպատակադրում և պլանավորում: Տալ ուսուցչին, նախ՝ երեխաներին կրթության բովանդակության մեջ ներգրավելու լրացուցիչ մոտիվացիոն միջոցներ, և երկրորդ՝ դասում «կրթությունն» ու «կրթությունը» օրգանապես համատեղելու հնարավորություն և անհրաժեշտություն՝ կառուցելու և՛ մարդկային, և՛ բիզնես. երեխաների հարաբերությունները:

1.2 Խմբային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մեծ հնարավորություն է տալիս անհատական և խմբային աշխատանքները կազմակերպելիս, կարճ ժամանակամիջոցում ծանոթանալու աշխատանքային և տեխնոլոգիական վերջին նվաճումներին, առաջարկում է նոր ձևեր և ուղիներ՝ առարկայի դասավանդման գործընթացում, կիրառելի է դարձնում առավել մատչելի և հասանելի ուսուցողական և ճանաչողական նշանակության նյութեր, տեսաերիզներ, ֆիլմեր:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն օգնում է և հնարավորություն է տալիս ճիշտ ու արդյունավետ կազմակերպել դասընթացը: Տեղեկատվական-

հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ սովորողները դառնում են տեղեկատվության ազատ սպառողներ՝ անմիջական կախվածություն չունենալով դասագրքային նյութերից, որը հնարավոր է իրականացնել դասարանական և արտադասարանական աշխատանքներ կազմակերպելիս:

Ուսումնական գործընթացի տեսակները

Անհատական գործունեությունը դրսևորվում է սովորողի և դասարանական, արտադասարանական աշխատանքների եղանակներով: Անհրաժեշտ պայմաններն են՝

- հետաքրքրվածությունը,
- գործի կարևորության գիտակցումը,
- նախաձեռնողականությունը,
- նպատակասլացությունը,
- անհատական նախասիրությունների դրսևորման և ազատ գործելու հնարավորությունը,
- ստեղծագործական աշխատանքի առկայությունը,
- երևակայության ազատ դրսևորումը և ստեղծագործելու համարձակությունը:

Զույգերով գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝

- ազատ հաղորդակցումն ու շփումը,
- «դիմացինին լսելու, հասկանալու, մտածված պատասխան տալու կարողությունը,
- հանդուրժողականությունը,
- համագործակցությունը,
- իր և ընկերոջ աշխատանքի, ուսումնառության և հաջողության համար պատասխանատվությունը:

Զույգերով գործունեության ձևերն են՝

<u>համատեղ քննարկումները, եզրահանգումներ անելը, վերլուծելը, կարդացածի բովանդակությունը միմյանց համար շարադրելը և ամփոփելը, հետազոտական աշխատանքը, վերլուծությունը, համադրումը, ստեղծագործական աշխատանքը:</u>

Խմբային գործունեության անհրաժեշտ պայմաններն են՝

- ազատ հաղորդակցումն ու շփումը,
- դիմացինին լսելու, հասկանալու, մտածված պատասխան տալու կարողությունը,
- հանդուրժողականությունը,
- համագործակցությունը,
- իր և խմբի անդամների ուսումնառության, աշխատանքի և հաջողության համար պատասխանատվությունը [6]:

Գործունեության ձևերն են՝

համատեղ հետազոտական և ստեղծագործական աշխատանքը, միասին զրույցներ, բանավեճեր, քննարկումներ, շնորհանդեսներ, մրցույթներ նախապատրաստելը և իրականացնելը:

Ինձ մոտ խմբային աշխատանքների գործունեությունը հիմնականում իրականացվում է ուսումնասիրվող հիմնական թեմաների շուրջ կառուցված՝ պարզից բարդ ուղղորդող վարժությունների, գծագրերի, պատկերների, համեմատությունների կատարմամբ:

Ելնելով սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից, փոխվում է առարկայի ուսուցման նպատակները և խնդիրները:

Համագործակցություն խմբերում աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ է

- թիմային աշխատանքի ոգին,
- ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնն անելու ցանկությունը,
- փոխկախվածությունն ու փոխկապվածությունը,
- սոցիալական փոխազդեցության հմտությունները,

- ♦ խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու և վերանայելու կարողությունը:

Իմ խնդիրն է՝ առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան: Այս մեթոդը նախատեսում է դասարանի աշակերտներին խմբերի բաժանել, ովքեր հանձնարարված առաջադրանքները կատարում են խմբով: Օրինակ՝ մեկ խումբը նախագծում է, մյուսը՝ մոդելավորում, երրորդը՝ կազմակերպում տեխնոլոգիական մշակման աշխատանքները:

Խմբային մեթոդն ակտիվացնում է աշակերտներին, բարձրացնում նրանց հետաքրքրասիրությունը՝ կատարվող աշխատանքի նկատմամբ: Խմբային գործունեությունը ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցություն: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը [6]:

Դիտարկենք համագործակցային ուսուցման հինգ տարրերը:

Դրական փոխկախվածության առկայության դեպքում խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են համատեղ հասնելու ընդհանուր նպատակին: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

Դեմառդեմ, խթանող փոխազդեցություն: Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն՝ ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

Սոցիալական հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը։

Խմբային գործընթաց: Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը [6]։

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Խմբային աշխատանքում դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները, միաժամանակ ձևավորվում են խմբի անդամին հատուկ կարողություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու, հարգելու, ապրումակցելու: Դասավանդողը պետք է տիրապետի այդ կարողություններին, դառնա խմբի անդամներից մեկը՝ իր սաների հետ ստեղծի սոցիալական այնպիսի միջավայր, որ հետաքրքրի սովորողներին և խթանի նրանց ինքնուրույնությանը, նախաձեռնողականությանը, հետազոտելու ու ստեղծագործելու կարողությանը:

Խմբային աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է սովորողների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա:

Խմբային աշխատանքը խթանում է սովորողների՝

- համատեղ մտավոր աշխատանքը, որի ժամանակ քննարկումները դառնում են ուսուցման միջոց,
- կամքի ուժը՝ միասին ընդունած կանոններն ու որոշումները հարգելու համար,
- համագործակցությունը,
- փաստարկներ բերելու, դրանք մեկնաբանելու, հիմնավորելու ունակությունը,
- այլոց նկատմամբ հարգանքը,
- խմբի մաս լինելու գիտակցումը,
- խմբի համար պատասխանատվությունը:

Ստորև ներկայացված է խմբային աշխատանքի մի քանի ձևեր՝ քննարկում, գործնական աշխատանք, մրցույթ-քննարկում, հետազոտական աշխատանք, խաղ: Որպես գործնական խմբային աշխատանք նպատակահարմար է իրականացնել օրինակ՝ ***բակային աշխատանք:***

Այսպես, յուրաքանչյուր դասարան սահմանված ժամանակացույցով բակում աշխատելու իր ժամերն ունի: Սովորողները բաժանվում են տարասեռ խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է առանձին առաջադրանք:

- Մի խումբը հեռացնում է մոլախոտերը,
- մյուսը՝ հավաքում է աղբը,
- երրորդ և չորրորդ խմբերը՝ իրականացնում են ծառատունկը:

Ինչպես ցանկացած բնագավառում, այնպես էլ բակային աշխատանքներում շատ կարևոր դեր ունի դասավանդողը, ով իր օրինակով ոգևորում է սովորողներին, սովորեցնում աշխատանքային գործիքներից ճիշտ օգտվել, դրան զուգահեռ հետևում է, որ խմբի բոլոր մասնակիցները ներգրավված լինեն աշխատանքում:

Աշխատանքի այս տեսակը սովորողների մոտ զարգացնում է խմբով աշխատելու կարողությունը, պատասխանատվության զգացումը, նպատակին հասնելու ձգտումը:

Հետազոտական աշխատանքը սովորողին տալիս է մտածելու, հետազոտելու, սովորելու, աշխատելու հնարավորություն: «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի շրջանակներում շատ հաճախ ենք կազմակերպում հետազոտական աշխատանքներ, որոնցից մեկն էլ վերաբերում էր «Ծառերի տնկում և խնամք» թեմային [7]:

Աշխատանքային գործունեության ընթացքում իրականացրած խմբային աշխատանքի ձևերից մեկն էլ խաղերի կազմակերպումն ու իրականացումն է, քանի որ խաղերը հստակ կանոններ ունեն, որոնք զարգացնում են խաղացողների թիմային մտածողությունը: Խաղացողները ոչ միայն սովորում են ենթարկվել բոլորի համար ընդհանուր կանոններին, այլև պատասխանատվություն են զգում խաղընկերների նկատմամբ: Նման խաղերի ժամանակ դրսևորվում են նաև խաղացողի առաջնորդական հատկանիշները, կազմակերպչական կարողությունները, պատասխանատվութուն ստանձնելու խիզախությունը:

Ամփոփելով վերը նշվածը կարող ենք ասել, որ խմբային աշխատանքը դասարանում նպաստում է կրթական գործընթացի ժողովրդավարացմանն ու մարդկայնացմանը: Ակտիվ արձագանքը խնդիրների, առաջադրանքների, առաջադրանքների քննարկմանը, որոնք սովո դնում են խմբերում, ընկերների պատասխաններին մասնակցելու, դրանք լրացնելու, ճշգրտումներ կատարելու ցանկությունը. դառնում է ուսումնական և ճանաչողական գործունեության առարկա, ապա կա զարգացնող կրթություն.Բայց պետք է հիշել, որ այս բոլոր ցուցանիշները

վավերական կլինեն, եթե ուսուցիչը համակարգում կիրառի խմբային աշխատանքի ձև:

Ապագայի դպրոցը երիտասարդ մասնագետների համար է՝

- Ուսումնական համագործակցությունը աշակերտի ձևավորմանը տանող գործողությունների շղթայի կարևորագույն օղակն է որպես կրթական գործունեության առարկա:
- Կրտսեր դպրոցականների միջև համագործակցության կազմակերպումը միմյանց հետ առավել ակտիվ է իրականացվում տարբեր տեսակի խմբային աշխատանքներում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ կրթական համագործակցության կազմակերպման խմբային ձևի գործունեության էությունն իրականացվում է տարրական դպրոցում դասընթացի ցանկացած թեմա ուսումնասիրելիս ուսումնական մոդելի կառուցման միջոցով: Կրթական գործունեության բաղադրիչների ձևավորման արդյունավետությանը, կրթական խնդիրների լուծման հաջողությանը և երիտասարդ ուսանողների միջև միջանձնային հարաբերությունների զարգացման մակարդակի բարձրացմանը նպաստել է զարգացման աշխատանքի համակարգը, ներառյալ կրթության խմբային ձևերի համակարգված օգտագործումը:

Հաշվի առնելով տարրական դպրոցական տարիքի երեխաների տարիքը և հոգեբանական առանձնահատկությունները խմբային աշխատանքի մեթոդների, միջոցների և ձևերի ընտրության ժամանակ՝ խմբային գործունեության մեջ, ստեղծագործական առաջադրանքների դասավանդման ավանդական մեթոդին ծանոթացում, բացի այդ ներդաշնակորեն զարգացած աճող անհատականության ձևավորման համար՝ հարմարավետ հոգեբանական և մանկավարժական պայմանների ստեղծում: Հիմնվելով արդեն կատարված մանկավարժական հետազոտությունների արդյունքների վերլուծության վրա, կարող են հստակ ասել, որ տարրական դպրոցում կրթական համագործակցության կազմակերպման խմբային ձևի օգտագործման մշակված համակարգի արդյունավետությունը հաստատվում է:

2.1 Փորձարարական մաս

2.1.1 Փորձարարական դաս

Հետազոտական աշխատանքն իրականացվել է Սիսիանի 1-ին հիմնական դպրոցի 3-րդ դասարանում: Ստեղծվեց 4 հոգանոց խմբեր, որոնց ներսում կատարեցին աշխատանքի բաժանում և պլանավորեցին իրենց անելիքը՝

I. տեղեկատվության հավաքման փուլ: Խմբի անդամները համացանցում փնտրեցին և գտան խմբին առաջադրված թեմայով տարբեր տեղեկություններ, որոնք խմբի ներսում միասին ընթերցեցին:

II. մշակման փուլ: Յուրաքանչյուր խումբ կարող էր այդ մշակումը յուրովի կատարել՝ հանձնարարելով այդ աշխատանքը խմբի անդամներից որևէ մեկին կամ միասին աշխատել: Արդյունավետ աշխատանքի արդյունքն այն է, որ սովորողները ոչ միայն խմբագրական աշխատանք կատարեցին, այլև իրենց կարդացած նյութերը վերլուծելու, ընդհանրացնելու շնորհիվ եզրակացություններ գրեցին՝ շարադրելով սեփական կարծիքը: Այս աշխատանքը կատարվեց ֆորմալ համագործակցային խմբերով, որոնք գործում են մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ ժամկետներում: Աշխատանքի այս փուլը պահանջում է ավելի շատ ինքնուրույնություն, կազմակերպվածություն, որովհետև ենթադրում է ստեղծագործական, հաջորդական և երկարատև աշխատանք:

III. փուլ: Այս խմբին հանձնարարվեց թեմա՝ լուսանկարչական աշխատանք:

IV. փուլ: հավաքված և մշակված նյութերը սովորողների խումբը պետք է ներկայացնի տեսանյութի կամ մեկ այլ ավելի հետաքրքիր մեդիաձևակերպուման միջոցով: Աշխատանքի այս փուլում առավել չափով ի հայտ է գալիս նաև սովորողի մեդիագիտելիքների մակարդակը (ինչ ծրագրեր գիտի, ինչպես է օգտվում մեդիագործիքներից, համացանցից և այլն):

Այս աշխատանքի առավելություններն են.

➔ **նպաստում է** թիմային աշխատանքին՝ մարդուն դարձնելով հանդուրժող, ուրիշի կարծիքը հարգող, համբերատար,

➔ **զարգանում է** սովորողների պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու համար:

Սովորողը գիտի, որ իր կատարած աշխատանքի համար միայն ինքը չի պատասխանատու և իր արած սխալը կամ բացթողումը կարող է խմբի աշխատանքի ձախողման պատճառ դառնալ, ուստի ավելի պատասխանատու է գործին մոտենում:

2.1.2 Փորձարարական դաս

Առարկա	**Մայրենի**
Դասարան	3-րդ
Ամսաթիվ	13.09.2023թ.
Թեմա	«Իմ բարձրանուն, իմ քաղցրանուն»
Դաս	«Հայրենիք»
Միջառարկայական կապ	Կերպարվեստ
Օգտագործվող նյութեր	«Հայաստանի խորհրդանիշները», տեսարժան վայրերի նկարներ, քարտեր
Նպատակը	1. Զարգացնել բանավոր և գրավոր կապակցված խոսքը 2. Զարգացնել համագործակցելու կարողությունը 3. Արտահայտիչ արտասանելու կարողություն 4. Կարծիք հայտնել բանաստեղծության վերնագրի և նոր վերնագիր առաջադրել 5. Զարգացնել ստեղծագործական միտքը 6. Վերաբերմունք դրսևորել հայրենի գյուղի կամ քաղաքի վերաբերյալ
Վերջնարդյունք	1. Արտահայտիչ արտասանել 2. Պատմել պատմություն, առակներ 3. Հորինել պատմություններ, հանելուկներ 4. Պահպանել կարդալու համապատասխան արագությունը, հանգավորումը 5. Զարգացնել համագործակցությունը

I. Խումբ	Ձեր բառերով պատմեք բանաստեղծությունը /նկարելով որևէ գյուղական կամ քաղաքի պատկեր/
II. Խումբ	Բանաստեղծի համար ի՞նչ է հայրենիքը
III. Խումբ	Ձեզ համար համար ի՞նչ է հայրենիքը
IV. խումբ	Հնարավո՞ր է ապրել առանց հայրենիքի

2.1.3 Փորձարարական դաս

Առարկա՝	Մայրենի
Դասարան	3-րդ
Ամսաթիվ	26.09.2023թ.
Թեմա	«Իմ ընտանիքը»
Դաս	«Ի՞նչ ասաց խնձորենին»
Նպատակը	1. Կարողանալ սահուն, գրագետ, առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը 2. Հասկանալ տեքստի բովանդակությունը 3. Զարգացնել պատմելու կարողությունը 4. Վերհիշել ածանցների տեսակները
Վերջնարդյունք	1. Արտահայտիր ընթերցելու կարողություն 2. Զարգացնել ստեղծագործական միտքը 3. Սխալ արարքի համար ներողություն խնդրել 4. Սեր և հարգանք տածել դիմիացինի հանդեպ

I. Խումբ	Նկարագրել պատմվածքի հերոսներին
II. Խումբ	Մայրիկը ի՞նչ անուն տվեց աղջկա արարքին: Ինչպե՞ս կվարվես սխալ արարքի դեպքում
III. Խումբ	Խնձորենին ինչու՞ բարձրացրեց իր ճյուղերը և երբ ներեց Նոյեմիկին
IV. խումբ	Նկարե՛ք պտուղներով պտուղներով լի զամբյուղ: Ի՞նչ ես լցրել նրա մեջ: Փոքրիկ շարադրանք. «Երբ ժպտում է արևը»

2.1.4 Փորձարարական դաս

Առարկա՝	**Ես և շրջակա աշխարհը**
Դասարան	3-րդ
Ամսաթիվ	28.09.2023թ.
Թեմա	«Ես և իմ շրջապատի մարդիկ»
Դաս	«Իրավունքներ և պարտականություններ»
Նպատակը	1. Կարևորել մարդկանց հետ փոխհարաբերությունները և այդ հարաբերություններում կարևոր է արտահայտել սեփական կամքը 2. Բնութագրել ինչպիսին պետք է լինի ընկերը 3. Գիտենալ սոցիական նորմերի, իրավունքների և պարտականությունների կապը 4. Գիտենալ, որ իր և մյուսների արարքները կարող են ունենալ դրական և բացասական հետևանքներ
	Միջառարկայական կապ ապահովել մայրենիի հետ
Վերջնարդյունք	1. Մեկնաբանի շրջապատի մարդկանց հետ փոխհարաբերությունների կարևորությունը 2. Նշի մի քանի որակներ, որոնք հատուկ են լավ ընկերոջը 3. Տարբերակի իրավունքը պարտականությունից 4. Պաշտպանի իր և մյուսների իրավունքները

I. Խումբ	Ներկայացնել սեփական իրավունքները
II. Խումբ	Ներկայացնել պարտականությունները
III. Խումբ	Նշված տեքստում ուղղել իրավունքները և պարտականությունները

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքում առաջադրված նպատակի և խնդիրների վերլուծության արդյունքները եկանք հետևյալ եզրահանգումներին.

- Խմբային աշխատանքի դիդակտիկ համակարգը այլընտրանք է կրթության դասաժամային համակարգին: Աշխատանքի խմբային ձևը շատ նոր գաղափարներ է պարունակում: Այն լուծում է բազմաթիվ ուսումնական և դիդակտիկ խնդիրներ, ինչպես նաև ստեղծում է օպտիմալ պայմաններ մարդուն սովորելու և կրթելու համար: Դասարանում խմբային աշխատանքը օգնում է ուսուցումը, դաստիարակությունը, զարգացումը միաձուլել մեկ գործընթացի մեջ, որտեղ լուծվում են այնպիսի առաջադրանքներ, որոնք այժմ անհանգստացնում են ուսուցիչներին:
- Ուսումնական գործընթացի կազմակերպման խմբային ձևով անհատականության ընդհանուր զարգացումը տեղի է ունենում ավելի արդյունավետ. ձևավորվում է ճանաչողական անկախություն, կամք, ուշադրություն, դիտարկում, տարբեր տեսակի հիշողություն և երևակայություն: Խմբային աշխատանքի դասերին երեխաները կարող են և պետք է անեն այն, ինչ չի կարելի սովորական դասերին՝ շարժվել, խոսել, հուշել: Նրանք սովորում են օգնել, օգնություն փնտրել միմյանցից, ինչը շատ կարևոր է ուսումնական գործընթացում, ձևակերպել իրենց տեսակետը, պարզել գործընկերների տեսակետը, բացահայտել տեսակետների տարբերությունը, փորձել. լուծել տարաձայնությունները տրամաբանական փաստարկների օգնությամբ:
- Դասարանում խմբային աշխատանքի կիրառման մեջ կան ավելի շատ դրական, քան բացասական կողմեր: Աշխատանքի խմբակային ձևը ներկայացնում է մեթոդական տեխնիկայի առատություն, տեղ է տալիս ուսուցչի ստեղծագործական որոնմանը և բացահայտում յուրաքանչյուր աշակերտի անհատական ունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Ս.Գ. Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 18
2. Խաչատրյան Ս.Գ. Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, «Նախաշավիղ», 1. 2003, Երևան, «Տիգրան Մեծ», էջ 17-24
3. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ,. 2004, էջ 45-47
4. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, էջ 145
5. Վարդումյան Ս., Զաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, էջ 48

Համացանցային կայքեր

6. Կրթահարթակ // https://krtahartak.am/courses/obligatory/course-018/lessons/%d5%ac%d5%a1%d5%a2%d5%b8%d6%80%d5%a1%d5%bf%d5%b8%d6%80-%d5%a3%d5%b8%d6%80%d5%ae%d5%b6%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d6%87-%d5%b6%d5%a1%d5%ad%d5%a1%d5%a3%d5%ae%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%b7%d5%ad/ [23.09.2023]
7. Դպիր // https://dpir.mskh.am/hy/node/773 [24.09.2023]